ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 099 11 30 99, Էլ. հասցե foi@foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.04.2013թ.
200-ի 3

ՀՀ Վայոց Ձորի մարզպետ
պարոն Էդգար Ղազարյանին

# Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Ղազարյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2013թ.-ի փետրվարի 5-ին էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել ՀՀ ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանին եւ խնդրել է տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Իրականացվու՞մ է արդյոք ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի ստացած էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառում,
2. Եթե այո, ապա էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառումն իրականացվում է առանձին, թե ընդհանուր:
3. Քանի՞ էլեկտրոնայն հարցում եւ դիմում է ստացել ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանը 2012թ.-ին (եթե էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառումն իրականացվում է առանձին, ապա խնդրում ենք տրամադրել հարցումների քանակն առանձին, դիմումներինը՝ առանձին):

Սակայն մինչ օրս ԻԱԿ-ը պատասխան չի ստացել:

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ վերոնշյալ տեղեկությունները:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան